

Կենդանիներու բարոյագիտութեան այս ոլորտը ու անոր հիմնաւորումը, կը բախին որոշ դժուարութիւններու: Այստեղ ընդհանրապէս հարկաւոր են՝ նոր քննարկումներ եւ նոր բացայայտումներ՝ մարդ-անասուն յարաբերութեան եւ անասուններու հանդէպ մարդու բարոյական դիրքաւորման մասին:

Արդեօք ինչպէ՞ս պէտք է մեկնաբանել Աստուածաշունչի ծանօթ պատգամը, ուր Աստուած իր ստեղծած մարդուն կը հրամայէ՝ կենդանի բնութեան վրայ տիրել եւ իշխել⁽¹¹⁹⁾ (**Գիրք Տննդոց Ա./28**), կամ ինչպէ՞ս հասկնալ յոյն փիլիսոփաներէն սոփեստ **Պրոտագորասի** (յուն.՝ *Prôtágorás*, 490 – 411 մ.թ.ա.) «*Մարդը բոլոր իրերու չափանիշն է*» շատ նշանաւոր խօսքը, որ իրերամերժ մեկնութիւններու արժանացած է: Այս իմաստով, արդեօք կրնա՞յ գոյութիւն ունենալ նուիրապետական կարգ մը, ուր «ոչ-մարդկային» անասուն կենդանիները ենթակայ են մարդուն կամ ընդհանրապէս այդ կենդանիները իրաւունքներ ունի՞ն:

Տակաւին կարելի է հարց տալ.- արդեօք բոլոր «ոչ-մարդկային» անասուն կենդանիներու մօտ ջղային դրութեան զարգացումը, եւ ըստայնմ անոնց ցաւի զգացումը նո՞յնն են, թէ պէտք է զանազանել օրինակ միջատներն ու որդերը, ողնաշարաւոր ու մանաւանդ կաթնասուն կենդանիներէն:

Կենդանիներու բարոյագիտութիւնը թէեւ հնադարեան ժամանակներէն ի վեր քննարկման նիւթ եղած է, սակայն Նոր Դարաշրջանի լուսաւորութեան շարժումով միայն աւելի կարեւորութիւն ստացաւ:

Հետեւելով «ոսկեայ կանոնին»⁽¹²⁰⁾ [*Ինչ որ չես ուզեր որ քեզի ընեն, դուն ալ (այդ) ուրիշներուն մի՛ ըներ*], կարելի է այս գաղափարը ընդհանրացնել, ընդգրկելով «ոչ-մարդկային» անասուն կենդանիները: Այստեղ հարցը այն չէ, որ այդ կենդանիները արդեօք բանականութիւն ու մտային կարողութիւններ ունի՞ն կամ կը խօսի՞ն, այլ՝ արդեօք անոնք կը տառապի՞ն կամ իրաւունքներ ընդհանրապէս ունի՞ն:

Վերջապէս, արդեօք կարելի՞ է *Բարոյագիտութեան տեսութիւնները*⁽¹²¹⁾, մանաւանդ **Կանտի** (Immanuel Kant, 1724 – 1804 թ.) *Պարտագիտական բարոյագիտութիւնը* կամ **Շոպենհաուրի** (Arthur Schopenhauer, 1788 – 1860 թ.) կարեկցութեան առնչուած *Չգացումի բարոյագիտութիւնը* ընդհանրացնել, ընդգրկելով «ոչ-մարդկային» անասուն կենդանիները:



(119) **Գիրք Տննդոց Ա./28**.- «... եւ Աստուած անոնց (Ադամին եւ Եւային) ըսա՛ւ՝ անցե՛ք ու շատցե՛ք, երկիրը լեցուցե՛ք ու անոր տիրեցե՛ք. ծովու ձուկերուն, երկնքի թռչուններուն ու երկրի վրայ գոնուող ամէն կենդանիներուն իշխեցե՛ք»:

(120) **Ոսկեայ կանոնի** (Golden Rule) մասին տե՛ս Մաս – 5, Էջ 163:

(121) **Բարոյագիտութեան տեսութիւնները** (Theorie of Ethics) կը գրաւեն ամբողջ Մաս – 5ը (տե՛ս Էջ 152), **Կանտի** պարտագիտական բարոյագիտութիւնը (Էջ 156) եւ **Շոպենհաուրի** կարեկցութեան բարոյագիտութիւնը (Էջ 208):